10130

656.2
4-21

2011

Ս. Խ. Հ. Մ.

Հ. Ձ. Ժ. Կ.

Վարչություն եւ Կառավարություն Թիֆլիս Ցերկաթ

2002
656.2
4-21

ՀՐԱՄԱՆ

28-ից նոյեմբերի 1925 թ. ք. Թիֆլիս։

2162
ЭДС—3.

Ոժանդակ գնացքների կանոնադրությունն ի գործակարություն ընդունելու մասին։

Առաջարկում եմ Անդրկովկասյան յերկաթուղիների վրա ընդունել ի գործակարություն և ի կիրառումն սրան կցված „Կանոնադրությունը ոժանդակ գնացքների և ոգնության մատուցման գնացքներին դժբախտ դեպքեր պատահելու ժամանակ“, որ հրատարակված է ՀՃԺԿ-ի գիտական-տեխնիկական Կոմիտեյի կողմից և լրացրած է Անդրկովկ. յերկաթուղիների՝ հրահանգներ քննող Մասնաժողովի կողմից համաձայն Անդրկովկասյան յերկաթուղային պայմանների։

656.2
4-21

Նախագահ Վարչության—Իվանով.

Գործադիր Կոմիտեի Գործերի Պետ—Աբրամով.

Գլխավոր Բաժնի Պետ—Կովալենկի.

238
15925-57

ԳԼԽԱԿԱՐԳ

57310-ի

ԲԱԺԻՆ I.

Ոժանդակ գնացքներ

Գլուխ 1.

Յերես

§§ 1—3 Ընդհանուր դրութիւններ . . .

Գլուխ 2.

§§ 4—8 Ոժանդակ գնացքի կազմը . . .

Գլուխ 3.

§§ 9—11 Ինչ կարգով են ոժանդակ գնացքները տեղագրվում և տեղափոխվում մի կայարանից մյուսը, և ինչպես են նորոգման ուղարկվում գնացքի կազմի վագոնները . . . . . .

Գլուխ 4.

§§ 12—21 Ինչպես պետք է հսկել ոժանդակ գնացքների վագոնների իրանների և քեղքի մասերի պահման և նրանց ինվենտարի սարքին պահման վրա . . . . . .

ԲԱԺԻՆ II.

Ողնություն հասցնելը գնացքներին դժբախտ դեպքեր պատահելիս

Գլուխ 1.

§§ 22—26. Թե ինչ կարգով և պահանջվում և պատահարի տեղն ուղարկվում ոժանդակ գնացքը

Հետարներ բոլոր յերկիրների, միացեք.

Հաստատում եմ
Ի. Տ. Ճանապ. Պետի ԱԲՐԱՄՈՎ

Գլխավարչության Անդրկովկ. յերկաթուղիների

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ոժանդակ գնացքների և ողնության մատուցման գնացքներին դժբախտ դեպքեր պատահելու ժամանակ։

Հրատարակված ՀՃԺԿ-ի գիտական-տեխնիկական մասնաժողովի կողմից և լրացրած ըստ Անդրկովկ. յերկաթուղ. պայմանների։

656.2
4-21

Սեր. Տ. № 2 1[6].

Գլուխ 2.

§§ 27—31. Ոժանդակ գնացքների տեխնիկական բրիգադների կազմակերպումը . . . . . .

Գլուխ 3.

§§ 32—33 Ճանապարհի գործակալների ուղեկցումն ոժանդակ գնացքին . . . . . .

Գլուխ 4.

§§ 34—48. Սանիտարական վագոնների կազմակերպումը ոժանդակ գնացքների կազմի մեջ, նրանցից օգտվելու կարգը և սանիտարական բրիգադների կազմակերպումը . . . . . .

ԲԱԺԻՆ III.

§§ 49—52. Ոժանդակ գնացքների տեղական մասնաժողովը . . . . . .

Աղիրներ.

1) Տեղեկագիր ոժանդակ գնացքի Քարչի Սպասի վագոն-արհեստանոցի սարքավորման առարկաների . . . . . .

2. Տեղեկագիր առարկաների, վորոնք պետք է գտնվեն Ուղիի սպասի վագոնում . . . . . .

3) Տեղեկագիր Կապի Սպասի այն առարկաների, վորոնք պետք է պահվեն կայարանի հեռագրատան ապպարատային սենյակում և պետք է ուղարկվեն Քարչի Սպասի վագոն-արհեստանոցի հատուկ բաժանմունքում՝ ոժանդակ գնացքը կանչելիս . . . . . .

4) Տեղեկագիր Կապի Սպասի այն առարկաների, վորոնք պետք է գտնվեն Քարչի Սպասի վագոն-արհեստանոցի առանձին բաժանմունքում . .

5) Ցուցակ ոժանդակ գնացքին կից սանիտարական տնտեսական գույքի 6 մահճակալի համար .

6) Ցուցակ բուժական առարկաների, վորոնցով պետք է նպարավորված լինին ոժանդակ գնացքների սանիտարական վագոններ . . . . . .

7) Անձնական պատասխանատվություն և ոժանդակ գնացքների սարքին լինելը . . .

Վերացնելով Անդրկ. յերկաթուղիներին նախապես տրված բոլոր կարգադրություններն ոժանդակ գնացքների մասին, հայտարարում եմ հետևյալ կանոնադրությունը պարտադիր գործադրության համար։

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ոժանդակ գնացքների և ոգնության մատուցման գնացքներին գժբախտ դեպքեր պատահելու ժամանակ

Բաժին I.

Ոժանդակ գնացքներ

Գլուխ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ։

§ 1. Գնացքներին գժբախտ դեպքեր պատահելու դեպքում ոգնություն մատուցանելու համար Քարչի Սպասի ուղղություններում դեպոներին կից պետք է կազմակերպվեն հատուկ ոժանդակ գնացքներ (վորոնք կայարանների վրա պետք է գրված լինեն։)

Այս գնացքների մշտական կացքը նշանակվում է հետևյալ կայարաններում—Բաթում, Սամտրեդի, Խաչուրի, Բորժոմ, Թիֆլիս, Գանջա, Հաջի-Կաբուլ, Բալաջարի, Բագու, Խաչմաս, Սանահին, Լենինական, Նախճվան, Շորապան։

§ 2. Ոժանդակ գնացքների գործողության շրջանները կազմում են՝

Ոժանդակ գնացքների կացքի կայարաններ	Սպասարկված շրջանի ծայրի կայարանները	Սպասարկված շրջանի ընդհանուր տարածությունը վերստ.
Բաթում	Բաթում-Սուպսա և Ողուբ-գեթի ճյուղը	69
Սամտրեդի	Սուպսա-Սամտրեդի, Փոթի-Աջամեթի, Խեթի ճյուղը, Տղի-բուլի ճյուղը	213
Խաչուրի	Աջամեթի-Գրակալի, Բորժոմի և Սուրամի ճյուղերը . . .	167
Բորժոմ նեղաձիր	Բորժոմ-Բակուրիանի, Բորժոմ-Բորժոմ պարկ	34,8
Թիֆլիս	Գրակալի - Աղստաֆա, Կախեթի ճյուղը, Թիֆլիս-Սադախլու	359,9
Գանջա	Աղստաֆա-Բյուրդամիր . .	237,1
Հաջի-Կաբուլ	Բյուրդամիր-Ալյաթ	111,8
Բալաջարի	Բալաջարի-Զորաթ	79,2
Բագու	Ալյաթ-Բագու, Սուրախան-Սաբունչիի ճյուղը	93,4
Խաչմաս	Զորաթ-Արաբլինսկայա . .	134,4
Սանահին	Սադախլու-Համամլու . .	98,2
Լենինական	Համամլու-Ուլուխանլու, Ցեբեվանյան ճյուղը . .	191,2
Նախճվան	Ուլուխանլու-Զուղա . . .	177,2
Շորապան	Շորապան-Սաչխերի . . .	49,6

Ծանոթություն: Ժամանակավորապես մինչև Խաչմաս կայարանում ոժանդակ գնացք կազմակերպելն ու սարքավորելը՝ Դերբենտ-Խաչմաս ուղեմասի սպասարկությունը կատարվում է բացառապես Հյուսիս-Կովկասյան յերկաթուղու Դերբենտի ուղեմասի ոժանդակ գնացքի միջոցով, իսկ Բալաջարի-Խաչմաս ներուսյալ ուղեմասը ժամանակավորապես պետք է սպասարկվի Բալաջարի ոժանդակ գնացքով։

§ 3։ Ոժանդակ գնացքը տեղադրման կայարանում պետք է կանգնած լինի նրա համար հատկացրած մի վորոշ տեղում։ Ոժանդակ գնացքի կացքի տեղի ընտրությունը կատարում է մասնաժողովը, վորի կազմի մեջ են մտնում տեղական տեխնիկական սպասների ներկայիչները, և այդ ընտրությունը ձևակերպվում է համապատասխան ակտով։ Կացքի տեղն ընտրելիս պետք է ղեկավարվել հետևյալ նկատառումներով.

ա) բոլոր վագոնները, վորոնք մտնում են ոժանդակ գնացքի կազմի մեջ, պետք է կազմակերպված դրությամբ կանգնած լինին մի տեղում, նրանց համար հատկացրած ուղիի վրա և պետք է կցված ու սեղավորված լինեն։

բ) այն ուղին, վոր տանում է դեպի գնացքի կացքի տեղը, չպետք է բռնված լինի ուրիշ շարժական կազմով, յեթե միայն ծայրահեղ կարիքը չէ ստիպում՝ նա պետք է միշտ բաց և ազատ լինի, և ուղեմասի Պետի վրա պարտականություն է դրվում հետևել, վոր գնացքի կացքի ուղին և նրա դուրս գալու ուղիները ժամանակին մաքրված լինին սառուցից ու ձյունից։

գ) Ոժանդակ գնացքի կազմը հնարավորին չափ պետք է մոտ կանգնած լինի ուղևորական շենքին և պետք է պահպանության տակ գտնվի։

Ծանոթություն։ Ոժանդակ գնացքի հիմնական կազմի կացքի տեղը վորոշում է մասնաժողովը, վորի կազմի մեջ մտնում են գնացքի տեղադրման կայարանի տեղական ավագ գործակալները՝ Քարշի, Շահագործման, Ուղիի, Կապի և Էլեկտրոտեխնիկայի սպասներից։

Գլուխ 2.

Ոժանդակ գնացքի կազմը։

§ 4. Ոժանդակ գնացքների կազմի մեջ պետք է մուծվեն վագոններ նպարակված գործիքներով և նյութեղենով, որոնք հարկավոր են շարժական կազմը կազմատելու և բարձրացնելու, ուղին չակելու, հեռագրական և հեռախոսական հաղորդակցությունը վերականգնելու, աշխատանքի վայրը մութ ժամանակը լուսավորելու, հրդեհը հանգցնելու, այլև անհրաժեշտ ապդանշանային պարագաներով, նմանապես սանիտարական վագոն, նպարակված պատգարակներով, վիրակապման միջոցներով և դեղորայքով։

§ 5. Ոժանդակ գնացքի հիմնական կազմը պետք է պարունակի—

ա) Քարշի սպասի վագոն-արհեստանոց՝ գործիքներով և նյութեղենով, որոնք հարկավոր են վնասված շարժական կազմը և շոգեշարժները կազմատելու. այս վագոնումն է գտնվում նաև Կապի սպասի ինվենտարը.

բ) ապրանքատար վագոն՝ Ուղիի սպասի պարագաներով և նյութեղենով.

գ) յերկու պլատֆորմ նյութեղենով, որոնք հարկավոր են ուղին և հեռագրական գիծը չակելու և շարժական կազմը բարձրացնելու համար.

դ) սանիտարական վագոն՝ նպարակված փոխադրության և վիրակապման միջոցներով և դեղորայքով վնասվածներին ոգնելու համար։

Ծանոթություն 1. Բացի այն վագոններից, որոնք թվարկված են § 5-ում՝ Ճանապարհի Պետի կարգադրությամբ առանձին ոժանդակ գնացքների հիմնական կազմի մեջ կարող են մուծվել և ուրիշ վագոններ այնպիսի հարմարանքներով, նյութեղեն-

նով ու գործիքներով, որոնց անհրաժեշտությունը պայմանավորվում է տեղական առանձնահատկություններով ճանապարհի այն ուղեմասերի, որոնք մտնում են ոժանդակ գնացքի գործողության շրջանի մեջ։

Ծանոթություն 2. Ոժանդակ գնացքներ Քութայիս, Զեստաֆոնի դեպոներին կից և յերկրորդ գնացքներ՝ Թիֆլիս, Յելափ, Աղստաֆա կայարաններում կարող են կազմակերպվել ավելի պարզ կազմով, բաղկացած Քարշի սպ. մի վագոն-արհեստանոցից նպարակված անհրաժեշտ պարագաների նվազագույն քանակությամբ։

§ 6. Ոժանդակ գնացքի հիմնական կազմի վագոնները պետք է լինեն արգելակավոր (բացի սանիտարակ. վագոնից, որի համար արգելակը պարտադիր չէ)։

§ 7. Ամեն մի ոժանդակ գնացք կամ նրա հիմնական կազմի մեջ մտնող առանձին վագոն, որ ոգնություն հասցնելու համար գնում է գիծը կամ կայարան՝ պետք է վերադառնա տեղագրման կայարանը (§ 10)։

§ 8. Յերբ ոժանդակ գնացքը գնում է պատահարի տեղը՝ նրա հիմնական կազմին (§ 5) կցվում են, նայելով հանգամանքներին, հարկավոր քանակությամբ վագոններ բանվորների, Ճանապարհի վարչության անձերի, հրշեջ առարկաների համար, ամբարձիկ կրանով պլատֆորմ և։

Գլուխ 3.

Ինչ կարգով են ոժանդակ գնացքները տեղագրվում և տեղափոխվում մի կայարանից մյուսը, և ինչպես են նորոգման ուղարկվում ոժանդակ կազմի վագոնները։

§ 9. Ոժանդակ գնացքի կացքի կայարանը համարվում է այս գնացքի վագոնների տեղագրման կայարան,

ուստի ոժանդակ գնացքի ամեն մի վագոնի վրա պետք է լինեն տրաֆարետային մակագիրներ—«ոժանդակ», (իսկ սանիտարական վագոնի համար՝ «սանիտարական») և «կացքի կայարան»։

§ 10. Ոժանդակ գնացքների տեղադրման կայարանները սահմանվում են ճանապարհի պետի հրամաններով և կարող են փոփոխվել ոչ այլասես, քան ճանապարհի պետի կարգադրությամբ, որ հրամանով հայտարարվում է ճանապարհին։

§ 11. Ցերը անհրաժեշտ լինի ոժանդակ գնացքի վագոնը նորոգել և այս բանն անկարելի լինի կատարել Քարշի սպասի կամ դեպոյի միջոցներով՝ ապա այս մասին զեկուցանվում է Քարշի սպասի պետին, որպեսզի կարգադրություն անե նորոգումն պահանջող վագոնը փոխարինել ուրիշ ոժանդակ կամ սովորական վագոնով։ Ցերը այս վագոնը հանելի՝ պետք է նրա մեջ փոխադրել բոլոր ինվենտարային գույքն ու նյութեղենը նորոգման գնացող վագոնից ներկայությամբ ճանապարհի այն ավագ գործակալի, որի վրա պարտականություն է դրված հսկելու նրա սարքին դրության վրա։ Այս վագոնի վրա պետք է մակագրվի—«ժամանակավոր ոժանդակ վագոն», իսկ սանիտարական վագոնի վրա՝ «ժամանակավոր սանիտարական» և «կացքի կայարան»։ Այս վագոնը պետք է մուծվի ոժանդակ գնացքի հիմնական կազմի մեջ։

Գլուխ 4.

Ինչպես պետք է հսկել ոժանդակ գնացքների վագոնների իրանների եվ քելքի մասերի պահման եվ նրանց ինվենտարի սարքին պահման վրա։

§ 12. Ոժանդակ գնացքների վագոնների իրանները և քելքի մասերը սարքին դրության մեջ պահելու հսկողությունը, ինչպես և այս սարքի համար պատասխանատվությունը դրվում է Քարշի Սպասի ուղեմասի կամ դեպոյի պետի վրա (տես առդիր № 7), որ պարտավոր է հսկել, որպեսզի ոժանդակ գնացքի յուրաքանչյուր վագոն ամեն ժամանակ կարողանա գիծն ուղարկվել և անվտանգ ընթանալ։

§ 13. Ամեն մի ոժանդակ կամ սանիտարական վագոն, որ պատկանում է ոժանդակ գնացքի հիմնական կազմին, պետք է նպարակված լինի այն նյութեղենով և ինվենտարային գույքով, որ ցույց են տրված ներկա կանոնադրության առադրված տեղեկագիրներում (առդիրներ №№ 1, 2, 3, 4, 5 և 6)։

§ 14. Հիմնական կազմի վագոնում յեղած ինվենտարի և նյութեղենի ցուցակները պետք է կախված լինեն ամեն մի վագոնում և պետք է հաստատված լինեն այն սպասի տեղական գործակալի սարքագրությամբ, որին պատկանում է վագոնում գտնված գույքը։ Ամեն մի շտկումն, որ կատարվում է ցանկի մեջ, պետք է հիշատակվի։

§ 15. Ոժանդակ գնացքի վագոններում յեղած ինվենտարի և նյութի սարքին պահման վրա պարտավոր են հսկել համապատասխան տեխնիկական սպասների տեղական ավագ գործակալները, այսինքն Քարշի սպասի ուղեմասի, արհեստանոցի կամ դեպոյի Պետը, Ուղիի սպասի ուղեմասի Պետը, Յերթևեկի սպասի բաժանմունքի կամ ուղեմասի պետը, իսկ սանիտարական վագոնինը—ուղեմասային բժիշկը։

§ 16. Կացքի ժամանակ ոժանդակ գնացքի վագոնները պետք է կողպած լինեն բանալիներով կամ կախովի կողպեքներով ու պլոմբած։ Ոժանդակ վագոնների բանալիները պետք է ունենան մետաղյա պիտակներ, որոնց վրա պետք է նշանակված լինեն ոժանդակ վա-

գոնի № ը և սպասի անունը (վոր սպասինն է)։ Ամեն մի ոժանդակ վագոնի վրա պետք է լինի մակագիր, թե վորտեղ են պահվում այս բանալիները։

§ 17. Ոժանդակ գնացքի հրմնական կազմի բանալիները պետք է լինեն 2 ձեռք, վորոնցից մեկը պահվելու յե դեպոյի հերթակալի տեղական գրասենյակում, իսկ մյուսը՝ կայարանի հերթակալի մոտ. թե մեկ և թե մյուս ձեռքը պետք է դրված լինեն վորոշ տեղում, վորի մոտ պետք է լինի մակագիր—«. . . . . կայարանի ոժանդակ գնացքի բանալիներ»։ Բանալիները պետք է պլոմբած լինեն կամ կնքած, բայց այնպես, վոր հեշտությամբ պոկվեն։

§ 18. Ոժանդակ գնացքի հիմնական կազմի վագոնների գույքի առկայությունն ու դրությունը պետք է ստուգվի մասնաժողովի ձեռքով՝ կազմված այն ավագ գործակալներից, վոր ցույց են տրված § 15-ում։ Այս ստուգումը պետք է տեղի ունենա պարբերաբար, վոչ պակաս քան ամիսը մի անգամ, նույնպես և ամեն անգամ՝ հիշյալ գույքը գործ ածելուց յետո։ Ստուգման մասին ընդհանուրի ստորագրությամբ կազմվում է համապատասխան ակտ, վոր ուղարկվում է Քարշի Սպասի Պետին։

Ծանոթություն։ Մասնաժողով հրավիրելու պարտականությունը դրվում է ոժանդակ գնացքների տեղական մասնաժողովի նախագահի վրա, այսինքն Քարշի սպասի ուղեմասի կամ դեպոյի Պետի վրա։

§ 19. Ստուգման ժամանակ պետք է ուշադրություն դարձնել, վոր հիմնական կազմի ոժանդակ և սանիտարական վագոններում առկա լինեն սպասարկման բոլոր առարկաները, համաձայն 1, 2, 4, 5, 6 առդիրներին, վոր բոլոր առարկաներն ու նյութերենը պիտանի

լինին գործածության և կարգին դարված, իսկ լապտերները սարքած պատրաստ։ Ստուգման ժամանակ նկատված կամ յերևան հանած բոլոր պակասորդներն, անսարքությունները ու անկանոնությունները պետք է վերացվեն վորքան հնարավոր է սեփական միջոցներով. հակառակ դեպքում այս մասին զեկուցագրով հայտնվում է համապատասխան Սպասների պետերին։

§ 20. Ոժանդակ գնացքի կազմի պահպանությունը կազմում է Ցերթևեկի սպասի պարտականությունը։

§ 21. Բացի այն ինվենտարից ու նյութեղենից, վոր կազմում են հիմնական կազմի վագոնների անհրաժեշտ պարագաները՝ յերբ պահանջ է ստացվում ոժանդակ գնացք ուղարկելու՝ սրա մեջ պետք է դրվեն № 1 և 2 արկղները, Կապի և Էլեկտրոտեխնիկայի սարածներով ու գործիքներով, վորոնք կացքի ժամանակ պահվելու են կայարանային հեռագրատան ապպարատային սենյակում, ավագ հեռագրիչի պատասխանատվության տակ (առդիր № 3)։

Ծանոթություն։ Այս արկղները ոժանդակ գնացքը հասցնելու պարտականությունն ընկնում է Կապի Սպասի ավագ գործակալի վրա, վոր ուղեկցում է ոժանդակ գնացքին։

Բաժին II.

Ոգնություն հասցնելը գնացքներին դժբախտ դեպքեր պատահելիս։

Գլուխ 1.

Թե ինչ կարգով է պահանջվում եվ պատահարի տեղն ուղարկվում ոժանդակ գնացքը։

§ 22. Ուղիի վրա կայարանքում գնացքին պատահարներ պատահելիս ոգնության սկզբնական պահանջը

բղխում է գլխավոր կոնդուկտորից կամ նրա տեղակալից։ Պահանջը հաղորդվում է պատահարին ամենամոտիկ կացարդի կետը հեռախոսով (ֆոնոպորի միջոցով), կամ հեռագրով, կամ հատուկ սուրհանդակով։

Պահանջը պետք է պարունակե հետևյալ տեղեկությունները—

ա) պահանջվում է արդյոք ոժանդակ գնացք, թե միայն շոգեշարժ.

բ) պահանջվում է արդյոք բժշկական ոգնություն, և քանի մարդ կա վնասված.

գ) վո՞ր վերստի վրա է տեղի ունեցել պատահարը.

դ) արդյոք գնացքում հրդեհ չե՞ ծագել և վորտեղ հատկապես (գլխում, միջավայրում, թե պոչում)։

ե) ինչումն է իսկապես կայանում պատահարը, արդյոք ռելսից ընկել է շոգեշարժ կամ վագոն, և քանի հատ, վնասված է արդյոք ուղին, կա՞ արդյոք վնասված բեռն, ևն, և ի՞նչ ակնհայտնի հանգամանքներումն է տեղի ունեցել պատահարը։

Պահանջը պետք է կազմված լինի կարճ, բայց այնպես, որ նրանից կարելի լինի վորոշ հասկանալ, թե ի՞նչ միջոցներ և նյութեր են անհրաժեշտ և վո՞րպիսի քանակությամբ՝ անմիջապես գնացքի կանգ առած տեղը հասցնելու, վնասված մարդկանց ոգնություն հասցնելու և կանոնավոր յերթևեկը վերականգնելու համար։ Պահանջի մեջ պետք է նշանակվի նաև գնացքի №-ը, վորին դժբախտ դեպք է պատահել, պահանջն ուղարկելու ամսաթիվը, ժամը, բոպեն։

Պահանջի վրա ստորագրությունը պետք է վորոշ լինի և պետք է հիշված լինի ստորագրողի պաշտոնը։

Ծանոթություն. Յերբ պատահարը տեղի է ունենում կայարանի հողամասի վրա՝ ոժանդակ

գնացքներ կանչում է կայարանապետը (կայարանի հերթակալը)։

Յեթե ուղիի վրա պատահարը տեղի է ունեցել տարերային աղետներից, որինակ՝ ուղիի ջրողողումից, հուսինից, կաչկատից՝ ոժանդակ գնացք ուղարկելու պահանջը կարող է բղխել ճանապարհի վարպետից։

§ 23. Կայարանապետը (կայարանի հերթակալը) ոգնությունն ուղարկելու պահանջն ստանալով՝ կարգադրություն է անում անմիջապես ուղարկել այդ ոգնությունը, յեթե կարելի է առձեռն պատրաստ միջոցներով և միաժամանակ պահանջում է, յեթե կարիք զգացվի, ոժանդակ գնացք կամ յերկու գնացք ուղարկել ոժանդակ գնացքների կացքի ամենամոտիկ կայարաններից։

Ոժանդակ գնացք ուղարկելու հեռագիրն ուղարկվում է սահմանված հետևյալ կրճատ հասցեներով—ՈՒԴՐ, ՊՆ, ՊԶ, ՊԳ, ԴՆ, ԴԶ, ԴՍ, ԴՄ, ՏԶ, ՏԴ, ՏԳԲ (հարկ յեղած դեպքում), ՇԶ, ՇՆ, ՄՐ, ՎԶ, ՎՖ (հարկ յեղած դեպքում) ԶԿՈՒ։ ԶԿ, ՈՐՏԶԿ, ԱԳԴՏԶԿ, Աշխատեսուչ։

Յեթե ոժանդակ գնացքի կացքի կայարանի հետ կարելի է անմիջապես հարաբերության մեջ մտնել՝ այս դեպքում կայարանապետը հասցեյավոր հեռագիրը տալուց առաջ ազդարարում է կայարանին հեռագրով կամ հեռախոսով—„պատրաստեցեք ոժանդակ գնացք“։

§ 24. Գործակալն ստանալով հեռագիր կամ հեռախոսագիր ոժանդակ գնացք պահանջելու մասին՝ պարտավոր է այս մասին անմիջապես հաղորդել կայարանապետին (կայարանի հերթակալին), վորի վրա դրվում է պարտականություն.

ա) Իրանից կախված բոլոր միջոցները ձեռք առնել անհապաղ ազդարարելու այն անձերին, վորոնք պետք է ուղեկցեն ոժանդակ գնացքին։

15925-57

Ծանոթություն. Այն գործակալների ցուցակը, վորոնք թվարկված են 3-րդ գլխում § 32-ում, նրանց ազգանուններով, անուններով, պաշտոններով և հասցեներով, պետք է գտնվի կայարանի հերթապահի զբաղեցնյակում, աչքի ընկնող տեղում։

բ) Փութապես կանչել շոգեշարժը և կոնդուկտորական բրիգադը ոժանդակ գնացքի համար։

գ) Փութապես հանդերձել գնացքը, այսինքն՝ դուրս բերել նրան ուղևորման ուղին և կցել նրան լրացուցիչ վագոններ, յեթե պահանջվի։

§ 25. Ոժանդակ գնացքը պետք է ուղարկվի պահեստի շոգեշարժով, յեթե այդպիսին պահվում է, հակառակ դեպքում ոժանդակ գնացքն ուղարկվում է մանեվրային շոգեշարժով կամ կայարանում յեղած գնացքից զատած շոգեշարժով։

Ծանոթություն. Հնարավոր յեղած դեպքում ոժանդակ գնացքին պետք է կցվի պլատֆորմ ամբարձիկ կրանով։

§ 26. Ոժանդակ գնացքը պետք է ուղարկվի— ցերեկը՝ վոչ ուշ քան 30 րոպե և գիշերը՝ վոչ ուշ քան 1 ժամ յետո, հաշված այն րոպեյից, յերբ կայարանի հերթապահն ստանում է ոգնության պահանջը (§ 23)։

Յեթե ոժանդակ գնացքն ուղարկվում է ավելի ուշ քան վերոհիշյալ ժամանակը՝ այս դեպքում կայարանապետը պարտավոր է հեռագրել սրա մասին ճանապ. Քարշի, Ուղիի, Յերթևեկի պետերին, ցույց տալով հապաղման պատճառը։

Յեթե չկա լիակատար կազմ հիշված անձերի, վորոնք պարտավոր են ոժանդակ գնացքին ուղեկցել, որինակ՝ տեխնիկական բրիգադը, Ուղիի սպասի բանվորների բրիգադը, ապա վորպեսզի ոժանդակ գնացքի հապաղում տեղի չունենա՝ գնացքն ուղարկվում է վերը

ցույց տրված ժամանակ, իսկ մնացած բրիգադն ուղարկվում է լրացուցիչ գնացքով։

Գլուխ 2.

Ոժանդակ գնացքների տեխնիկական բրիգադների կազմակերպումը։

§ 27. Ռելսերից ընկած շարժական կազմը շուտով բարձրացնելու, ջարդված վագոնները ջոկելու և քեկորների տակից մարդկանց ազատելու համար՝ ոժանդակ գնացքի տեղադրման կայարանում Քարշի Սպասը պետք է կազմակերպե մշտական բրիգադ դեպոյի արհեստավորների և բանվորների, վորոնք փորձառու յեն այս գործում և լավ ծանոթ են վագոնների իրանների և քեկի շրջանակների հորինվածքին։ Այս տեխնիկական բրիգադը կազմակերպելիս Քարշի ուղեմասի կամ դեպոյի պետը պետք է ղեկավարվեն հետևյալ կանոններով.

ա) Ոժանդակ գնացքի բրիգադի կազմի մեջ մտնելու յեն.

1. Մի բրիգադի պետ, վոր ղեկավարում է բրիգադը,
2. Զորս փականագործ.
3. Մի հյուսն կամ ատաղձագործ.
4. Մի փականագործ կամ բանվոր լուսավորման սարքերի վրա հսկելու.
5. Զորս հասարակ բանվոր.
6. Մի նկուղպան, վոր հսկում է Բ. Սպասի ոժանդակ վագոնի գործիքների վրա։

բ) Այն անձերը, վորոնք նշանակվում են ոժանդակ բրիգադների կազմի մեջ, պետք է ծանոթացած լինեն շարժական կազմը բարձրացնելու և ջոկջկելու գործին, գնացքի լուսավորման սարքերը բանեցնելուն և այն

միջոցներին, որոնք գտնվում են ժանդակ վագոններում։ Քարշի Սպասի պետը պարտավոր է պարբերաբար նրանց քննել ստուգելու համար, որ նրանք գիտեն այս պարտականությունները։

Բրիգադի կազմի մեջ մտնող գործակալների և նրանց տեղակալների անվանական ցուցակը նրանց հասցեներով՝ պետք է կախված լինի Քարշի ուղեմասի կամ դեպոյի գրասենյակում և ամեն մի փոփոխության դեպքում պետք է ուղղվի։ Այս ցուցակը շարունակ պետք է ստուգվի և ուղղվի այն դեպքերում, եթե նրա մեջ մուծված անձերից որևէ մեկը հիվանդանա կամ գործուղարկվի կամ հասցեն փոխվի, Ցուցակ պետք է կազմել յերկու կազմի համար, որպեսզի հարկ յեղած դեպքում կարելի լինի յերկու բրիգադ կանչել։

§ 28. Բրիգադի կազմ մեջ մտնող գործակալները պետք է ունենան տեղեկալներ։ Թե սրանք և թե նրանք պարտավոր են գիշերվա և ցերեկվա ամեն պահին հենց առաջին պահանջին յերևեկել՝ ժանդակ գնացքով գնալու համար։

§ 29. Քարշի ուղեմասի պետը կամ դեպոյի հերթակալը հենց որ կայարանից ստանա հեռագիր կամ բերանացի հայտարարություն բարձրացնող խումբ ուղարկելու պահանջով՝ անմիջապես կարգադրություն է անում ժողովելու բոլոր անհրաժեշտ բանվորները։

§ 30. Ցերբ գնացքներին ավելի ծանր պատահարներ են պատահում՝ Քարշի ուղեմասի կամ դեպոյի պետի կարգադրությամբ բրիգադի կազմը կարող է լրացնվել այն չափով, որքան իրական կարիքը պահանջում է։ Իսկ այն դեպքերում, յերբ այս կարիքը չէ կարող բավարարվել ուղեմասի կամ դեպոյի միջոցներով՝ ապա բանվորական ույժը, ինչպես և անհրաժեշտ գործիքներն ուղեմասի պետը հեռագրով կարող է պահանջել արհեստանոցի պետից։

տանոցի պետից, հեռագրի պատճենն ուղարկելով Քարշի պետին։ Արհեստանոցի պետն այսպիսի պահանջն ստանալիս պարտավոր է անյապաղ միջոցներ ձեռք առնել՝ հնարավորին չափ շուտ և լիովին նրան իրագործելու համար, փոխանակի ազդարարելով Քարշի ուղեմասի պետին՝ իրագործման մասին, պատճենն ուղարկելով Քարշի սպասի պետին։

§ 31. Ճանապարհի վարպետը, յերբ կայարանապետից կամ ուղիի ուղեմասի պետից ծանուցումն է ստանում, թե ժանդակ գնացք է ուղարկվում գիծը՝ պարտավոր է անհապաղ գալ գնացքի ուղարկի տեղը՝ յուր տրամադրության տակ յեղած փորձառու բանվորների արտելով, իսկ ընթացման ճանապարհին այդ կազմը լրացնում է կազարմներում յեղած գծի բանվորներով, նայելով պատահարի չափին։

Գլուխ 3.

Ճանապարհի գործակալների ուղեկցումն ժանդակ գնացքին։

§ 32. Ցերբ ժանդակ գնացքը ուղարկվում է ոգնություն հասցնելու, նրան պետք է ուղեկցեն։

ա) Քարշի ուղեմասի կամ դեպոյի պետը (կամ նրա ոգնականը)։

բ) Ուղիի այն ուղեմասի պետը (կամ նրա ոգնականը), որի շրջանումն է տեղի ունեցել պատահարը։

գ) Կապի սպասի ուղեմասի պետը, ելեկտրոմեխանիկը և հեռագրիչը։ Եթե Կապի սպասի ուղեմասի պետը հնարավորություն չունենա անձամբ գնացքին ուղեկցելու՝ ապա նրան փոխարինող հանդիսանում է ելեկտրոմեխանիկը։

դ) Ուղեմասային բժիշկը՝ յեթե պատահարի ժամա-

նակ կան վնասված մարդիկ. իսկ եթե բժիշկը չէ ապրում կայարանում՝ ապա բուժակը.

ե) Շահագործման սպասի բաժանմունքի պետը (կամ վերաքննիչը), եթե սրանք ապրում են ուղարկի կայարանում կամ գնացք՝ ընթացման ուղիի վրա.

զ) Քարշի սպասի փականագործների և բանվորների տեխնիկական բրիգադը, սանիտարական բրիգադը և Ուղիի սպասի բանվորների բրիգադը.

է) Ցերկաթուղային պահակի և ՃՏԱՄ-ի գործակալները.

ը) Հրշեջ բրիգադը՝ եթե պահանջվում են հրշեջման սարածներ ու պիտույքներ.

Բացի սրանցից, պատահարի կայարանքի սահմաններում ոժանդակ գնացքին ուղեկցում է վերջին կայարանի պետն անձամբ կամ նրա տեղակալը.

§ 33. Գնացքներին դժբախտ պատահարներ պատահած ժամանակ ոգնություն մատուցանելիս աշխատանքների ղեկավարությունը դրվում է յեկող գործակալներից նրա վրա, վորը պաշտոնով ավագագույնն է, հետևյալ կարգով—1) Ուղիի սպասի բաժնի պետը, 2) Ցերթևեկի սպասի բաժանմունքի պետը, 3) Ուղիի սպասի ուղեմասի պետը, 4) Քարշի սպասի ուղեմասի պետը, 5) Ցերթևեկի վերաքննիչը, 6) Քարշի սպասի վերաքննիչը, 7) Ուղիի սպասի ուղեմասի պետի ոգնականը, 8) Քարշի սպասի ուղեմասի պետի ոգնականը, 9) Վերադարձի դեպոյի պետը, 10) Կայարանի պետը. Այս գործակալը բացի ընդհանուր ղեկավարությունից պարտավոր է պատահարի տեղումը ձեռնարկել քննելու պատահարը և այն հանգամանքները, վորոնց մեջ տեղի յե ունեցել պատահարը, այսինքն պետք է պարզել պատահարի պատճառը. բացի սրանից նա պարտավոր է հեռագրել ճանապարհների պետին, նույնպես և Քարշի, Ուղիի, Ցերթևեկի

պետերին վնասված գնացքին ոգնելու բոլոր աշխատանքների ընթացքի մասին,

Աշխատանքի ժամանակ պարտականությունները հետևյալ կերպով պետք է բաշխվեն առանձին սպասների միջև.

1) Վնասվածներին ոգնելը և վիրավորվածներին հիվանդանոցները հասցնելը կազմում են բուժական սպասի գործակալների պարտականությունը.

2) Ուղևորները կայարան հասցնելու հոգը, ուղևորների տեղափոխի կազմակերպությունը, բագաժի վերաբեռնումը, բեռների պահպանությունը կազմում են Ցերթևեկի սպասի գործակալների պարտականությունը.

3) Հեռագրական գծի շտկումը, ժամանակավոր հեռագրական կամ հեռախոսական կայան հիմնելը, եթե դրան կարիք լինի, դրվում են Կապի սպասի գործակալների վրա.

4) Շարժական կազմը բարձրացնելը, շոգեշարժները ու վագոնները ջոկելն ու հավաքելը, ուղին շարժական կազմի բեկուներից մաքրելը, դիշեր ժամանակ պատահարի տեղը լուսավորելը դրվում են Քարշի սպասի գործակալների վրա.

5) Ուղին և արհեստական կառուցվածքները շտկելը դրվում է Ուղիի սպասի գործակալների վրա.

Շրջուղի կառուցանելու հարցը քննում են բոլոր սպասների ներկայիչները.

Ծանոթություն. Այնպիսի պատահարների ժամանակ, վորոնց վերացնելու համար պահանջվում է տեղումը տեվական աշխատանք, պետք է հոգ տարվի կազմելու արհեստավորի և բանվորների համապատասխան յենթափոխ՝ աշխատողներին անհրաժեշտ հանգիստ մատակարարելու համար.

Գլուխ 4.

Սանիտարական վագոնների կազմակերպումը ոժանդակ գնացքների կազմի մեջ, նրանցից ոգտվելու կարգը եւ սանիտարական բրիգադների կազմակերպումը:

§ 34. Ոժանդակ գնացքի սանիտարական վագոնը պետք է միշտ գտնվի նրա կազմի մեջ և չպետք է ոգտագործվի ուրիշ նպատակների համար։ Սանիտարական վագոնները չեն մտնում այն վագոնների նորմի հաշվի մեջ, որոնք դրված են ճան. Առաջնի տրամադրության տակ։

§ 35. Սանիտարական վագոնի ինվենտարի և բուժական գույքի սարքին պահպանության վրա հսկողությունն ու պատասխանատվությունը, այլ և նրանց լրացնելու պարտականությունը դրվում է այն ուղեմասային բժշկի վրա, որ սպասարկում է ոժանդակ գնացքի կացքի կայարանը։

§ 36. Սանիտարական վագոնը պետք է ունենա 6 մահճակալով տեղ, վիրակապման տեղ, դեղարան և բաժանմունք տնտեսական պարագաների համար։ Պատգարակները անցկացնելու դյուրության համար սանիտարական վագոնը պետք է ունենա դեպի դուրս բացվող կողքի դուռն։

§ 37. Սանիտարական վագոնը պետք է ունենա 6 մահճակալ լիովին սարքավորված, բուժական գործիքների կոմպլեկտ, դեղորայք, վիրակապման նյութեր և տնտեսության առարկաներ, որոնք ցույց են տրված ներկա կանոնադրության առադրված տեղեկագրերի մեջ (առդիր №№ 5 և 6)։

§ 38. Սանիտարական վագոնի բոլոր գույքը պահ-

վելու է հենց վագոնում, որ պետք է միշտ փակ լինի և պլոմբած։

§ 39. Ցերը սանիտարական վագոնը դուրս է գալիս դեպի պատահարի տեղը՝ նրան պետք է ուղեկցե ուղեմասի բժիշկը կամ հերթական բուժակը՝ հիվանդընկալ կայանի ծառայողներով։

§ 40. Վիրավորներին փոխադրելու համար գործի յե դրվում սանիտարական բրիգադը։

§ 41. Սանիտարական բրիգադը, 5 6 հոգու կազմով, կազմակերպում է ուղեմասային բժիշկը այն ծառայողներից ու բանվորներից, որոնք ապրում են ոժանդակ գնացքի կացքի կայարանում։ Այս գործի համար պատրաստված անձերի քանակը պետք է այնքան լինի, որ միշտ հնարավոր լինի բրիգադը լիակատար կազմով հավաքել առանց դժվարության։ Բրիգադի մեջ մտնող անձերի ցուցակը, նրանց ազգանուններով, պաշտոններով ու հասցեներով պետք է աչքի ընկնող տեղում կախված լինի հիվանդընկալ կայանում և կայարանի հերթակալի մոտ։ Այս ցուցակը պետք է չարունակ ստուգվի ու շտկվի այն դեպքում, յեթե ցուցակի մեջ մուծված անձերից որևէ մեկը հիվանդանա, գործուղարկվի կամ հասցեն փոխի։

§ 42. Ուղեմային բժշկի վրա պարտականություն է դրվում սանիտարական կազմի մեջ մտնող անձերին սովորեցնել նախնական ոգնություն հասցնելու յեղանակը։ Ուսումը չարունակվելու յե մի ամիս, որից յետո նշանակվում է քննություն։

§ 43. Ցերը ոժանդակ գնացքը մեկնում է դեպի պատահարի տեղը՝ սանիտարական վագոնը միշտ մնում է նրա կազմի մեջ, ի նկատի ունենալով, որ աշխատանքի ժամանակ կարող են դժբախտ դեպքեր պատահել և որպես զի սանիտարական վագոնի զատման մա-

նեվրների պատճառով գնացքի մեկնումը չհապաղի։ Իսկ բժշկական կազմը և սանիտարական բրիգադն ամբողջ կազմով սանիտարական վագոնին ուղեկցում են միայն այն դեպքում, յեթե պատահարի ժամանակ մարդիկ են վնասվել։ Մյուս բոլոր դեպքերում սանիտարական վագոնին ուղեկցում է միայն հերթակալ բուժակը։

§ 44. Բժշկական կազմը՝ հենց վոր կայարանի հերթակալից ազդարարություն է ստանում, թե ոժանդակ գնացքի հետ պահանջված է բժշկական ոգնություն՝ միջոցներ է ձեռք առնում անհապաղ կանչելու բոլոր այն անձերին, վորոնք պետք է սանիտարական վագոնին ուղեկցեն։

§ 45. Վագոնը ճանապարհվելուն պես բժիշկը (կամ բուժակը) վագոնը պատրաստում է վիրավորներն ընդունելու համար, ինչպես նաև պատրաստում է գործիքները և վիրակապման նյութերը, վորպես զի տեղ հասնելուն պես անմիջապես ձեռնարկե վնասվածներին ոգնելու։

§ 46. Նայելով պատահարի մեծության բժիշկը, ոգնության գործին ույժ տալու համար, կանչում է հարևան ուղեմասերի և կետերի բժշկական կազմը, վոր պատահարի տեղն է գալիս չուտափույթ ոգնության արկղներով։

§ 47. Պատահարի տեղը հասնելով բժշկական կազմը սահմանում է վնասվածներին ոգնելու հերթը, ավելի ծանր վիրավորվածներին տեղավորելով վագոնում։ Յերբ պատահարի տեղումը վորոշվում է վնասված մարդկանց թիվը՝ բժիշկն անհապաղ ծանուցանում է կայարանին, թե վո՞րքան է վնասվածների թիվը, քա՞նի տեղ է հարկավոր պատրաստել նրանց համար ամենամոտիկ հիվանդանոցում և թե հարկավո՞ր է պատրաստել փոխադրության միջոցներ՝ վնասվածներին բուժական վայրը հասցնելու համար։

§ 48. Յերբ ոժանդակ գնացք յետ է դառնում՝ ուղեմասային բժիշկն անկախ կանոնադրությամբ նախատեսված հաշվետվությունից հաղորդակցության ճանապարհների վրա մարդկանց հետ պատահած դժբախտ դեպքերի մասին, կազմում է առանձին մանրամասն ցուցակ բոլոր վնասվածների համար, նկարագրելով վնասվածքները և նշանակելով պատահարի ժամանակն ու տեղը։ Այս ցուցակն ուղարկվում է ճանապարհի գլխավոր բժշկին։

Բաժին III.

Ոժանդակ գնացքների տեղական մասնաժողովը։

§ 49. Ներկա կանոնադրությունը գործադրելիս զանազան սպասների գործակալների գործողությունները համաձայնեցնելու նպատակով՝ սահմանվում է ոժանդակ գնացքների տեղական մասնաժողով, վորի կազմի մեջ մտնում են Քարշի՝ ուղեմասի կամ դեպոյի պետը, Ուղիի ուղեմասի պետը, Կապի ուղեմասի պետը, ուղեմասային բժիշկը։ Մասնաժողովի նախագահն է Քարշի սպասի կամ դեպոյի պետը։

§ 50. Տեղական մասնաժողովը պարտավոր է վորոշել

ա) Թե վո՞րտեղ պետք է կանգնած լինի ոժանդակ գնացքի կազմը, նկատի ունենալով, վոր պատահարի տեղը գնալիս նրա համար ապահովված լինի ազատ անցք։

բ) Թե վո՞ր կետերում պետք է հավաքվեն տեխնիքական բրիգադի և սանիտարական բրիգադի անձերը՝ յերբ նրանց հրավիրեն գնացքի հետ գնալու։

§ 51. Տեղական մասնաժողովի վրա (§ 49) պարտականություն է դրվում ամսեյամիս ստուգել ոժանդակ գնացքի վագոնների և ինվենտարի առկայությունն ու

սարքին լինելը (համաձայն § 18-ի ցուցումների), նույնպես և միաժամանակ ստուգել, թե իրագործվում են արդյոք ներկա կանոնագրության հետևյալ պահանջները.

ա) Հիմնական կազմի վագոնների մակագիրների առկայությունն ու նրանց կանոնավորությունը (§§ 9 և 11);

բ) Բանալիների և նրանց հետ յեղած պիտակների առկայությունը. բանալիների համապատասխան լինելը պիտակներին և նրանց՝ սահմանված տեղում գտնվելը համապատասխան մակագրություններով, դեպոյի հերթակալի և կայարանի հերթակալի գրասենյակներում (§§ 16 և 17);

գ) Գործակալների ցուցակը և նրա կանոնավոր վարումը հեռագրական ապպարատային սենյակում (§ 24, կ. ա);

դ) Տեխնիկական բրիգադի ցուցակը և նրա կանոնավոր վարումը (§ 27, կ. գ.);

ե) Սանիտարական բրիգադի ցուցակն ու նրա կանոնավոր վարումը, ստուգելով բրիգադի հավաքման արագությունը;

§ 52. Տեղական մասնաժողովի նախագահի վրա պարտականություն է դրվում, յերբ ոժանդակ գնացքը ոգնություն մատուցանելուց յետո յուր տեղագրման կայարանն է հասնում կարճ ժամանակամիջոցում (վոչ ուշ քան 7 որվա ընթացքում) ժողովի հրավիրել բոլոր ավագ անձերին, վորոնք մասնակցել են ոժանդակ գնացքի աշխատանքին—հրավիրելով նաև կրտսեր ծառայողներին, վորոնց նախագահը հարկավոր կհամարի—քննելու համար այն առաջարկները, վորոնք բղխում են գնացքի այդ աշխատանքի փորձից, այն նպատակով, վոր առաջիկա դեպքերում ոգնությունը մատուցանելու գործը ավելի բարվոքվի։ Այս խորհրդակցության հետևանքները նա-

գահը զեկուցագրով հաղորդում է Քարշի սպասի պետին։

Քարշի ուղեմասի կամ դեպոյի պետը պետք է պահեն ակտերի հատուկ մատյան, վորի մեջ մուծվում են թե այն ակտերը, վոր կազմվում են ոժանդակ գնացքի ամեն մի վագոնի ինվենտարի ամսական ստուգման մասին և թե այն ակտերը, վոր կազմվում են ոժանդակ գնացքի ամեն անգամ պատահարի տեղը գնալուց յետո կատարված ստուգման մասին.

Առդիր № 1

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ոժանդակ գնացքի Քարշի սպասի վագոն-արհեստանոցի սարքավորման առարկաների։

№№ ըստ կարգի	Անվանումն առարկաների	Քանակ	Ծանոթութ.
	ա. Բարձրացման պարագաներ.		Ոժանդ. վագոն. համար Սամարեդի, Խաշուրի, Թիֆլիս, Գանձակ, Բագու կայ.
1	Զլաբաշխական բարձիչ .	2	
2	Ցերկաթե բարձիչներ սահնակի վրա 15 տոննանոց .	4	Նախնական գնացքի 1, § 1-ում հիշված դեպքերի վագոնների համար։
3	Վագոնի բարձիչ, փայտե 15 տոննանոց	4	
4	Բուքսի լինգ՝ մեծ . .	2	
5	սովորական $1^1/_4'' \times 4$ (31,75 մ/մ × 102 մ.) .	3	
6	Կառան ողով և ճանկով $^3/_4'' \times 30$ սաժ. (19,05 մ/մ × 63,9 մ.)	1	
7	Կառան ողով և ճանկով $1^1/_4'' \times 10$ սաժ. (31,75 մ/մ × 21.03 մ.)	1	
8	Կանեփի թոկ $1^1/_4'' \times 20$ սաժ. (31,75 մ/մ × 42,6 մ.) . . .	1	
9	Կանեփի թոկ $^1/_4'' \times 15$ սաժ. (19,05 մ/մ × 32 մ.)	1	
10	Կանեփի թոկ $3'' \times 30$ սաժ. (76,2 մ/մ × 64 մ.) . . .	1	

№№ ըստ կարգի	Անվանումն առարկաների	Քանակ	Ծանոթութ.
11	Ցերկաթե չղթա ճանկերով և ողակներով $1'' \times 6$ սաժ. (25,4 մ/մ × 12,8 մ.)	1	
12	Ցերկաթե չղթա ճանկերով և ողակներով $1^1/_2'' \times 9^1/_3$ սաժ. (38,1 մ/մ × 20 մ.)	1	
13	Պարան $^1/_2'' \times 28$ սաժ. (12,7 մ/մ × 60 մ)	1	
14	Տարբերական ծիծեռիկ 5 տոննանոց	1	
15	Տարբերական ծիծեռիկ 1 տոննանոց	1	
16	Նիգ յերկաթի կռած 3 արշինանոց (2,13 մետր)	2	
17	Ռելս անիվներն իջեցնելու և գլորելու	2	
18	Պահանգ նրանց համար . .	1	
19	Սեպեր վագոնները վրա բերելու (պողպատե սանդալներ 4 աջ, 4 ձախ)	8	Ութ-ութ հատ Սամարեդի, Խաշուրի, Թիֆլիս, Գա ջա, Բագու կայարան. ոժանդ. վագոն. համար, իսկ Բաթում, Բորժոմ, Հաջի - Կաբուլ, Բալաջ., Խաչմաս, Սանահ., Լենինական. Նախճվ., Շո-
20	Սայլակներ վագոնների տակն անցկացնելու համար	2	
21	Շարժական ամբարձիչ կրան սայլակի վրա (յեթե հնար է)	1	Միայն Բաթում
22	Կանգուն անվորդ (յեթե հնար է)	1	

№ ըստ կարգի	Անվանումն առարկաների	Քանակ	Ծանոթութ.
23	Կաղնի գլդոնիկ $1^1/_2$ արշ. $\times 3$ վ. $\times 3$ վ.	32	բական կայար. վագոն. համար չորս-չորս հատ.
24	Ցերկաթե տակդիր . . .	20	Սամարեդի, Խաշ., Թիֆլիս, Գանձա և Բաքու կայար. վագոնն համար:
25	Կաղնի տակդիր $8'' \times 3'' \times 1^1/_2''$.	20	
26	Ծծան	1	
	ը. Փականագործական պարագաներ.		
1	Փականագործի դազգյան փոքր	1	
2	Մամլակ կոճի վրայի . . .	1	
3	Մամլակ ձեռքի, փականագործական	1	
4	Սրոց թուջի տաշտակում 15" (381 մ/մ)	1	
5	Ուռն 1 փթանոց (16,4 քգ.)	1	
6	„ 20 ֆունտ. (8,2 քգ)	4	
7	Մուրճ փականագործական .	6	
8	Մուրճ բաբիտի	1	
9	Ղալամ (կտրիչ) փականագործական սովորական . . .	4	
10	Ղալամ (կտրիչ) յերկար .	2	
11	Կրեյցմեյսել փականագործական	4	

2013
10130
<< Ազգային գրադարա
NL0083537